ԹԵՄԱ 1

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ: ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հնագիտություն

Հնագիտությունը հիմնականում պեղածո նյութերի հիման վրա մարդկության պատմական անցյալն ուսումնասիրող գիտություն է:

Հնագիտության (արխեոլոգիա) ուսումնասիրության առարկան անցյալի կառույցներն են, դամբարանները, աշխատանքի գործիքները, կենցաղային պիտույքները, զենքերը և այլն: Հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերը պահպանվում և ցուցադրվում են թանգարաններում, իսկ պեղված հնավայրերի մի մասը վերածվել է բացօթյա թանգարանների:

Պատրաստի՛ր սահիկաշար և ներկայացրո՛ւ դասարանին համաշխարհային նշանակության հնավայրերի մասին. չմոռանաս Հայկական լեռնաշխարհի հայտնի հնավայրերը:

Ազգագրություն

Ազգագրությունը գիտություն է ժողովուրդների կենցաղի, սովորույթների, տեղաշարժերի, էթնիկական յուրահատկությունների, պատմամշակութային առնչությունների մասին, այն ուսումնասիրում է ժողովուրդների կրոնական հավատալիքները, ծեսերը, կենցաղը, հագուստը և այլն: Սերտորեն կապված է պատմության, հնագիտության, սոցիոլոգիայի, լեզվաբանության, մարդաբանության, բնագիտության, աշխարհագրության, երաժշտության հետ: XIX դ. վերջին հետզհետե տարանջատվել են բանահյուսությունն ու ազգագրությունը՝ վերածվելով գիտության առանձին բնագավառների:

Ազգագրության մասին պատրաստիր սահիկաշար և ներկայացրու դասարանին՝ չմոռանալով ուսումնասիրել հայկական ազգագրությունը:

Դրամագիտություն

Դրամագիտությունը պատմական օժանդակ գիտություն է, ուսումնասիրում է դրամահատության, դրամական շրջանառության պատմությունը, մետաղադրամները, դրամական գանձերը, մեդալները, շքանշանները և այլն:

Դրամագիտության հիմնական աղբյուրը հին դրամներն են, որոնք՝ որպես շրջանառության միջոց, ուսումնասիրվում են գրավոր և հնագիտական աղբյուրների հետ:

Դրամագիտության մասին պատրաստիր սահիկաշար և ներկայացրու դասարանին. չմոռանաս ուսումնասիրել Հայկական դրամները:

Լեզվաբանություն

Լեզվաբանությունը գիտություն է, որի ուսումնասիրության առարկան մարդկային լեզուն է: Այդ ուսումնասիրությունը հիմնված է, մի կողմից՝ առանձին լեզուների փաստական երևույթների քննության վրա, մյուս կողմից՝ լեզվի տեսական, ընդհանուր հարցերի լուսաբանման վրա: Այս երկու կողմերը լեզվաբանության մեջ հանդես են գալիս միասնաբար:

Լեզուն քարացած երևույթ չէ. նա հարատև փոփոխվող ու զարգացող է: Լեզուների զարգացման օրինաչափություններից զատ, ուսումնասիրում է տարբեր լեզուների միջև հեռավոր անցյալում տեղի ունեցած փոխշփումները: Լեզվաբանական տվյալների հիման վրա պարզվում են ժողովուրդների ծագումնաբանությունը. նրանց միջև եղած հարաբերությունները:

Լեզվաբանության մասին պատրաստիր սահիկաշար և ներկայացրու դասարանին:

Առասպելաբանություն

Առասպելաբանությունն ուսումնասիրում է ժողովուրդների կրոնական հավատալիքները, դրանցում ամփոփված աշխարհընկալման և աշխարհաստեղծման գաղափարները:

Առաջադրանք

Ուսումնասիրիր պատմական աղբյուրներ, որոնք ներկայված չեն:

Կնիքագիտությունը, զինանիշագիտությունը, պատմական սկզբնաղբյուրներ և ինքնուրույն գիտություններ են: